

ՀՈՎԻՏՆԵՍ ԱՍԱՏՈՒՐԻ ԴԱՐՔԻՆՅԱՆ

Երևանի Կոմիտասի անվ. պեդագոգական կոնսերվատորիայի պրոֆեսոր, բառատար, խմբավար



Հովհաննես Ասատուրի Դարբինյան (1940-2016)

ՀՈՎԻՏՆԵՍ

Հ Ո Ւ Շ Ե Ր

Դեկտեմբերի 30-ին կյանքից հեռացավ ժողովրդական երաժշտության կատարուն դեմքերից Հովհաննես Դարբինյան մեծանուն երաժիշտը: Նա իր գիտելիքով, մտորումներով ուղիղ և իրավացի ճանապարհներ ցույց տվող մտավորական էր: Իր մշտական այցելություններով խմբագրությունը՝ թե՛ ՀՀ ռադիոյի երաժշտական հաղորդումների գլխավոր խմբագրությունը որտեղ հավաքված էր հայրենադարձ խմբագիրների սերունդը, որտեղ ինքը իր հարազատ միջավայրում էր իրեն զգում (Բեյրութահայ, հայրենադարձված էր 1946-ին), թե՛ կոնսերվատորիայի հրատակաչությունում: Գործընկերները մշտապես զգում են ՀՀ վաստակավոր արտիստի, ԵՊԿ պրոֆեսորի ներկայության պակասը նրա խորհուրդների և իմաստուն խոսքի բացակայությունը, խորհրդատվությունը հատկապես հոգևոր և արևելյան երաժշտությանը վերաբերող: Նա ՀՀ ռադիոյի և Հայֆիլի հարմոնիայի մենակատար էր: Ձեռքին, նոր դեռ թանաքը չչորացած հողվածը բարձրաձայն կարողալու էր գործընկերների կարծիքն իմանալու համար, հանձնում էր և անհամբեր սպասում դրանց լույս ընծայմանը: Նրա խնդրանքով է, որ իր բոլոր հողվածները մեկ համարում ենք հրատարակում:

Հունվարի 6-ն էր, Սուրբ Ծննդյան օրը Ս. Էջմիածնի Մայր տաճարի երգչախմբի շարքում նստած տեսա Հովհաննես Դարբինյանին հեռվից հեռու հայացքներս հանդիպեցին, Պատարագի ժամանակ միմյանց չբարևեցինք: Այն ավարտվելուն պես մոտեցա բարևեցիք մի քանի խոսք փոխանակեցինք և բաժանվեցինք, սակայն ես էլ ինքն էլ հայացքով միմյանց ճանապարհեցինք բազմամշանակ. ես իմ ընտանիքիս հետ ուղևորվեցի Երևան, Հովհաննես Դարբինյանը երգչախմբի ավտոբուսով: Ես անմիջապես մտածեցի, որ ինքն իր հարազատ միջավայրում է և շատ երջանիկ էր երևում արտիստներով շրջապատված և միևնույն էր ինքն էր ղեկավարում, թե ոչ: Ես գիտակցեցի, որ երգչախումբն ասած երևույթն էր նրա հարազատ ընտանիքը: Հաջորդ օրը եկավ հրատարակչությունը, ես անմիջապես իրեն ասացի, որ Պատարագի ժամանակ այնքան լուսավոր էր, խաղաղ իր դիմագիծը հեռվից, նա էլ ինձ պատասխանեց. նույնն էլ ես տեսա, երբ քեզ էի նայում, ես ծիծաղեցի, բնականաբար այդպես պետք է լինի չէ որ Սուրբ Ծննդյան օրն էր այն էլ Էջմիածնում: «Ճիշտ ես ասում» հաստատեց համաձայնելով: Մենք վիճաբանում էինք մշակութային հարցերում և ճշմարտության հասնում ու գոհանում: Այդ անգամ անմիջապես համաձայնվեցինք: Նա երբեք չէր մոռանում ում հետ, որ հարցերում է համախոհ և մշտապես հիշեցնում և էլ չէր շարունակում նույն թեմաներով բանավիճել, այլ վկայակոչում էր համախոհին, այդպես էր նաև Ի. Գ. Տիգրանովայի հետ մշակութային առաջընթացի հարցում Սովետմիության դերի կարևորմանը և հատկապես Հայաստանի մշակույթի: Երբ հանդիպում էին փաստում էին «մենք համախոհներ ենք այդ հարցում» և բոլորս դադարում էինք որևէ հակառակ կարծիք հնչեցնելուց: Այդ թույլեցնելով վայելում էր իր խաղաղությունը համակարծիք մարդկաց շրջանակում: Նա իր հողվածները ի պահ տվեց, ասելով. «Երևի ես չտեսնեմ հրատարակված, սակայն կուզենամ, որ բոլորը մեկ համարում լույս տեսնեն ու ամսագրում ոչ թե ամսաթերթում»: Ես խոստումս կատարում եմ, հիշատակդ անմար հարգելի երաժիշտ-մտավորական:

Գործընկեր՝ Գոհար Շագոյան

ՌՈՍԱՆՈՍ ՄԵԼԻՔՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտական ուսումնարանում սկսվեց նոր՝ 1956-1957 ուսումնական տարին: Բոլորը խոսում էին առաջին կուրսի կոմպոզիտորական բաժնի նորընձա ուսանող Տիգրան Մանսուրյանի մասին, որ հայ երաժշտարվեստը մեծ սպասելիքներ ունի նրանից... Տիգրան Մանսուրյան, Տիգրան Մանսուրյան: Վերջապես ծանոթացա: Նիհարակազմ մի պարտանի՝ սրճագույն, մաշված բանկոնով իր «սպեղնագործությունների» թրթապանակն աջ թևալակին, անհանգիստ շարժումներով. մրազբաղ սպեղնագործական հեռուները փակող արահեղներով, բոլորին սիրալիր կիրթ ողջունելով (հոգաբար արքայադուրսյանը): Անցնում էին ամիսներ. նրա մասին խոսում էր ամբողջ ուսումնարանը, իսկ հասարակության փնթիկները՝ փառասեր արքայաքինով, կոմպոզիտոր Մարտին Մազմանյանը առանձնա-

հարույժ հոգաբարությանը էր շրջապարել Տիգրանին. «Տիգրան, Տիգրան... մնում էր ավելացնել «Մեծ» բնութագրումը...

Պարզվեց, որ Մ. Մազմանյանը ճիշտ էր «գուշակել» անսովոր պարտանու ապագան...

Իսկ ես, նրա համակուրսեցիս որպես բառատար և ինքնամիտի պարտանի, զննում էի Տիգրանին ու մրաժնում, որ նա երկրային էակ չէ: Դժվար ժամանակներ էին, չքավորություն: Տնօրենը զգալով Ման-



Մարտին Մազմանյան, Հովհաննես Դարբինյան

Երաժշտական ՀԱՅԱՍՏԱՆ 1(54)2016



**Զոլիանես
Դարբինյանի
սիրելի
ստեղծագործու-
թյուններից,
Կոմիտասի
ձեռագրերից**



ստրյանի նյութական ծանր վիճակը, իր հևարավորությունների սահմաններում աջակցում էր ապագա կոմպոզիտորին, ամառային արշակուրդներին ուղարկում էր հանգստյան փունի: [...] Անցան փարիներ: Մ. Մազմանյանը Կոմիտասի անվ. կոնսերվատորիայում խմբավարական ֆակուլտետի ուսանողական փարիներին իմ դեկավարն էր: Մեր միջև սրեղծվել էր մտերմություն: Զրույցներից մեկի ժամանակ նա պարմեց Տիգրան Մանուկյանի երաժշտական ուսումնարանում սովորելու փարիների մասին (նրա դասապետն էր կոմպոզիտոր Էդուարդ Բաղդասարյանն էր): «Երկրորդ կուրսի առաջին կիսամյակի մասնագիտական քննությանը Տիգրանը ներկայացրել էր դաշնամուրային մի ստեղծագործություն: Իմ այն հարցին, թե Տիգրան, այս ստեղծագործության մեջ ի՞նչ ես նկարագրում, պատասխանեց. «Վայրենի մարդիկ հում միս են ուտում»:

Ավարտելով ուսումնարանը Մարտին Մազմանյանի գնահատող և հոգաբար վերաբերմունքի շնորհիվ նույն ուսումնական հասարակությունում սկսվեց իմ մանկավարժական գործունեությունը: Ամոթիս, որիչներին իմ կարողություններից վեր դասող սկսնակ մանկավարժ, թառ ուսուցանող, բոլորի արհամարհանքին արժանացած մի գործիք, որի անունն անգամ լսելը ցանկալի չէր աշխարհկիցների և սովորողների համար: Իմ «ճակարագիրն» էլ երևի դա էր... Մ. Մազմանյանին փոխարեն Գոհար Հարությունյան անուն ազգանունով մի փրկին, խոժոռ դեմքով «խարաբար» մի կին... Մանկավարժական խորհրդի նիստերին էլույթ ունեցողների առաջարկությունները լսելուց հետո նույն մտքերն ու առաջարկությունները ի մի բերելով «լրջության քողով» պարտոված ներկայացնում էր համբերությունը հարած համբերաբար աշխարհկիցներին, որի էլույթից հետո բոլորը օ՛ֆֆֆ հոգոց հանելով, ավարտվում էր մանկավարժական խորհրդի հերթական նիստը:

Ուսումնարանում կային նաև եղբայրակցություններ: Հայրնի էր կոմպոզիտորներ Գրիգոր Հախինյանի և Էդուարդ Բաղդասարյանի եղբայրակցությունը, որը կրճար կոչվում էր «հախարա» եղբայրություն: Այդ եղբայրակցության բաժնետեր Էդուարդ Բաղդասարյանն արժանացել էր ՀՄՄՀ արվեստի վաստակավոր գործչի պարվավոր կոչման: Հերթական մանկավարժական նիստերից մեկի ժամանակ էր այդ... ես, որ չափազանց ամոթիսած վերաբերմունք ունեի Էդուարդ Բաղդասարյանի նրկարմամբ, նիստի ժամանակ նրան ասացի. «Էդուարդ Իվանովիչ, շնորհավորում եմ պատվավոր կոչ-

ման համար»: Բաղդասարյանը, որ անունն անգամ չգիտեր, ինչանից փեղեկանալով այն, ասաց. «Հովիկ ջան, առաջինը դու շնորհավորեցիր ինձ, ոչ ոք չի շնորհավորել, սրանք մարդ չեն»:

«Հախարա» եղբայրակցությունը միահամուռ էր նաև կյանքի վայելքներն ըմբռնելու ժամանակ: Ինչպես գրել է Թումանյանն. «Ինչը կհաղթի կյանքում հերոսին, թե չլինի կինն ու գինին». նրանք էլ որպես արվեստի ընդունված բաղկացուցիչ, անարբեր չէին խմիչքի հանդեպ: Եվ մի օր, աստիճաններով վեր են բարձրանում «հախարա» երկու մտերիմ ընկերներն. ուսումնարանի ռազմագիտության ուսուցիչ, զինվորական, լեհինականցի Ալեքսան Բոյաջյանը, փեսնելով Գրիգոր Հախինյանին և Էդուարդ Բաղդասարյանին, սկանցիս շնջաց. «երկուսն էլ մարտական վիճակում են...»

Լինելով Գրիգոր Հախինյանի և Էդուարդ Բաղդասարյանի կրտսեր աշխարհաբային գործընկեր, մշտապես հետևում էր նրանց խոսակցությանը, որը լի էր կարակախոս արտահայտություններով: Հախինյանը լռեցի էր՝ կիրովականցի, իսկ Բաղդասարյանը՝ թիֆլիսեցի: Յուրաքանչյուր միտք, որ արտահայտում էին, համեմվում էր իրենց ծննդավայրի բարբառային և փրամաքանական ասույթներով: Մի օր Հախինյանը, որ նրանց կրտսեր աշխարհաբային գործընկերն էի, ասաց. «Հովիկ ջան, Ամալյան (որը նորավարտ քանոնահարուի էր) ուզում է, որ հետը դիրիժորություն պարապես, որպեսզի ընդունվի կոնսերվատորիա»: Պարապեցի. չընդունվեց: Նույն փարվա սեպտեմբերին թե՛ նոյեմբերին... երեկոյան, դուրս եկա ուսումնարանից, ինչ մտրեցավ Գրիգոր Հախինյանը և ասաց. «Հովիկ ջան, գնանք մի կտոր հաց ուտենք», հրավիրելով Լեհինի պողոտայում գրվնվող «Արգիշտի» ռեստորան: Ներքուստ նախապարաստվեցի ծախար կարարել: Ռեստորանում, կոմպոզիտորի ներկայությունը մեծ աշխուժություն առաջացրեց հարկ չեղավ վճարել, նրա հեղինակությունն ամեն ինչից վեր էր:

Ուսարորանից դուրս գալիս Հախինյանը ասաց. «Հովիկ, նրանք քեզ վճարեցին քո աշխատանքի համար»: Իմ ոչ պարասիսանին, Հախինյանը ասաց. «Արա, Ամալյայի եղբոր հետ ես կոմպոզիցիա էի պարապում, ինձ հրավիրում էին իրենց տունը կեր ու խումի: Գիտես ովքեր են եղել ծնողները..., կալանավորել են և դատել»: Տես ում հետ ենք գործ բռնել»:

Ուսումնարանում, առանձնահատուկ դիրք ունենալու հեղինակություն էր վայելում քավջութակահար Գերոնյի Թալալյանը: Հաղթանդամ, փառահեղ արտաքինով մի անձնավորություն: Լինելով փայլուն արվեստագետ, միաժամանակ օժտված էր նաև ոչ արվեստի ներկայացուցիչներին բնորոշ հոգեբանությամբ: Սովետական ղեկավարների խոսելաչափ, շարժ ու ձևի, նույնիսկ քայլվածքի վարպետ նմանակողն էր: Ուսումնարանի խարաքարտ փնթեկը րեանելով Գ. Թալալյանի, «Հախաղ» եղբայրակցության անդամների սանձարձակ պահվածքը, նրանց ասաց. «Տղերք, մենք չենք կարող իրար հետ աշխատել»:

«Գոհար Աղասինա, դիմում գրե՛ք, ազատվե՛ք». եղավ նրանց պարասիսանը:

ՀԱՄԵՐ ԳԱՅԻՆ ՇՐՋԱ ԳԱՅՈՒԹՅՈՒՆ ԲԵՆ ԳԻԱՅՈՒՄ

2003-ի նոյեմբերի 28-ից դեկտեմբերի 11-ը Բելգիայում կայացավ իմ համերգները: Ի դեպ, 1997թ-ին Արամ Մերանգուլյանի անվան անասմբի առաջատար երաժիշտներից կազմված խմբի հետ նվագել էի Բելգիայում «Դրանուրեր» միջազգային ֆոլկլորային փառատոնի շրջանակներում և ինչ այնպեղ արդեն ճանաչում էին:

Նոյեմբերի 29-ը Հերենյու քաղաքի հանդիսությունների արահ...

Մասնակցեցի «Բրաբանյի» ֆոլկլորային նվագախմբի փնթեկ, կոնյորաբասահար, պրոդյուսեր Էժիդ Վիսենտեկենսի ծննդյան 60-ամյակին նվիրված հոբելյանական երեկոյին: Այդ առթիվ րարբեր երկրներից հրավիրված էին երաժիշտներ, որոնցից էր անգլիական ժողովրդական երգի՝ Բերբի Կուրի, Ջիմ Բոլս, Լեսարեր Մինիսոն վոկալ եռյակը:

Ողջունի խոսքից հետո կատարեցի Կոմիտասի «Ունաբի», «Մարալի», «Երկրագործի երգը» սրեղծագործությունները:

Նոյեմբերի 30-ին Լյուվեն քաղաքի Մայր րահար... Ժամերգության ընթացքում հոգևորականների ցանկությանը նվագեցի «Տեր ողորմյա», որը բարձր գնահատվեց:

1-ը դեկտեմբերի համերգ ժողովրդական սրեղծագործության ցուցահանդեսում: Իսկ հաջորդ օրը մշակույթի աշխատողների խնդրանքով կայացավ կամերային համերգ:

3-ը դեկտեմբերի համերգ Բրյուսելի երաժշտական գործիքների թանգարանում:

Այսպեղ ներկայացված էր թանգարանի զիպաշխատող, երաժշտագետ պարոն Հյուբեր Բոննի՝ Երևանից գնած թառը, որից ցուցադրումն ուղեկցը-



Գովհաննես Դարբինյանը «Պամինա» անսամբլի հետ համերգում. Դանիլա Լելեուն, Քրիսթինա Նաեսենը, Ժոկե Ժոդիսը, Քրիսթին Ալսթենը: Բելգիայի դպրոցականների հետ, 2003 թ.

վում էր իմ կատարումներից հայ ժողովրդական «Ա՛յ աղջիկ» երգի մեղեդիով:

Տիրեցնողն այն էր, որ րեղի Ադրբեջանի Դեսպանի պահանջով նվագարանի մոտ գրված «Հայաստան» անունը ջնջված և փոխարենը գրված էր՝ «Ադրբեջան-Ղարաբաղ» և, որ այն ունի ադրբեջանական ծագում: Եթե լսեր իմ կատարումսը հայ երաժշտությունը նույնպես կարգելեր:

5-ը դեկտեմբերի Վիկտուել քաղաքի Սուրբ Հովսեփ րահարում րեղի ունեցավ հայ-բելգիական բարեկամության համերգ:

Տեղի «Պամինա» ֆլեյտահարների քառյակը, որը կազմում էին հայրնի երաժիշտներ Դանիելա Լելեուն, Քրիսթինա Նաեսենը, Ժոկե Ժոդիսը և Քրիսթինա Ալսթեն մեծ րպավորություն թողեց ներկաների վրա: Այն հայ և բելգիական երաժշտական մշակութային մերձեցման ինքնարիպ օրինակ էր: Հեղաբրբրականը Ժորժ Բիզեի «Կարմեն» օպերայի հայրնի «Հաբաներայի» միացյալ կատարումն էր:

6-ը դեկտեմբերի անակնկալ էր իմ մասնակցության հրավերը Լյուվեն քաղաքի դրամատիկական թատրոնում դուդուկահար Ջիվան Գասպարյանի համերգին թատրոնի գեղարվեստական ղեկավարի կողմից: Այն անցավ մեծ հաջողությամբ: Այս համերգների մասին րեղի «Վիլդ Ապրտուս» և «Վեկելբլանկ» թերթերը հոդվածներ րպագրեցին:

Պարոն Դժիդ Վիսենտեկենսը համերգներից առաջ ներածականով ներկայացնում էր Հայաստանն ու հայ ժողովրդին՝ որպես հնագույն մշակույթ ունեցող և առաջինը Պերականորեն Քրիստոնեությունն ընդունած պետություն:

Հուզիչ էր Բրյուսելի հայ համայնքի հետ **դեկտեմբերի 9-ին** րեղի ունեցած հանդիպումը:

Խանդավառ և հյուրասեր հայերը, որոնք գաղթեցին Արևմտյան Հայաստանի Տիգրանակերտի գավառից, պարզ մարդիկ էին, պարում էին արևմտահայերի շուրջպարերը, երգում ժոցովրդական երգեր: Լավ րիրապետելով անասնապահության գաղտնիքներին՝ աննման համով ոչխարի խորոված էին պարասարել ու սեղան գցել: Հրավիրված էին նաև պարոն Էժիդ Վիսենտեկենսը և նրա կինը րիկին՝ Անիլան: Համայնքի ներկայացուցիչները թրքախոս էին: Նրանց խնդրանքով իմ կատարած

երաժշտական ԳԱՅՈՒՄՍԱՆ 1(54)2018

ժողովրդական «Դե յաման» երգի մեղեդին հուզեց բոլորին: Չբավարավելով այս հյուրասիրությանը՝ Բեկզախյց հայ դեմոկրատների միության անասագահ պարոն Պողոս Օրմենյանը, պարոն Սարգսյը և իր փրկիկն Վերժինը, պարոն Ասլանը, ասեցի (Կիլիկիա) Հակոբ Եթովյանը հարուկ հրավերով հյուրընկալեցին իրենց հարկի փակ, հյուրասիրելով Արևմտյան Հայաստանի ճաշարեսակներ, որոնք ինչ հիշեցրին իմ մեծ փարփի և մորս պարտապարձ համեղ ու ևնանը չունեցող կերակուրները՝ համեմունքների գլխապարտյար բույրով:

ԴՈՒԴՈՒԿԱՀԱՐ ԼԵՎՈՆ ՄԱԳՈՅԱՆԻ ԾՆՆԳՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ ԸՆԴԱՌԱՋ (1909-1964)

Հնչում են Գյումրվա «Յոթ Վերք» եկեղեցու առավորյան ժամերգությունն ազդարարող զանգերը: Մուշ-մուշ քնած փոքրիկ Լևոնիկի բարեպաշտ մայրն արթնացնելով ասում է. «Լևոնիկ, քելե, քելե Յոթ վերքի զանգերը կուտան, էրթանք «Առավոտ լուստ»-ն լսիմքօր օրը բարի էղնի»:

Այսպես է սկսվել ապագա մեծանուն դուդուկահարի առաջին փայլունությունը ազգային երաժշտության հետ: Ընկալելով հոգևոր և ժողովրդական երաժշտության հետ Լևոն Մադոյանն այն ներկայացնելու էր իր մանկական անաղարտ զգացողության անդրադարձով: Տան սնդուկը փորփորող մորը խնդրելով նրա հարակում նկատած ծակծկված «փրուբեն», նրա վերից-վարից փչելով նկատում է, որ այն չայն է հանում:

Մայրը որդուն հիշեցնում է. «Իղիգ խաղալիք չէ, պապիդ դուդուկն է, լավ կշալեր...»: Այսպես ինքնուրույն ուսումնասիրելով դուդուկի հնչարարներման պարզունակ եղանակները, պարանին Գյումրվա դուդուկահարների միջավայրում կատարում է իր առաջին քայլերը: «Լևոն ջան, դու շա՛տ ընդունակ էս» վարպետ նվագածուների գնահատականից հետո վարահարար շարունակում է «չալել»:

Խորապես զգալով դուդուկի չայնի ներգործուն ուժը մարդկային ներաշխարհի վրա, նա երբեք շուրթերով ավելորդ չէր միջամարում նրա հնչողությանը և գեղեղացնում այն՝ պահպանելով հայ գեղջկական երգի բնույթն ու առանձնահատկությունները:

Նա մեղեդիներն ու պարեղանակները ներկայացնում է այնպես, ինչպես երգում ու պարում է ժողովուրդը՝ միամիտ, ազնիվ:

Որպես ավանդապահ, մրտախոգ է ժողովրդական երաժշտությունն անաղարտ պահելու համար:

Որպես ժողովրդի սրեղծածն իրեն վարահաված:

Որպես ժողովրդի ծոցից ելած նվագածու, գիտակցաբար է վերաբերվել նրա սրեղծածին: Համոզված է, որ նվագածուն ազար չէ իր իրավունքների մեջ, որ իր նվագով կարող է ժողովրդին սխալ ուղղությամբ առաջնորդել, որ այն դժվար, պարասխանապու գործ է: Որի արտահայտությունն է դրժվար ժամանակներում խիզախաբար Սուրբ Ներսես Ընդրեալու «Առավոտ լուստ»-ն «Մահարի» անվանելով հնչեցնելը, այն արժանացել է Լևոն Մադոյանի

նի արվեստի առաջին գնահատող կոմպոզիտոր Նիկողայոս Տիգրանյանի քաջալերիչ վերաբերմունքին:

Արտիճանաբար հաջողություններ գրանցելով նվագում է Գյումրվա ֆիլիարմոնիայում, հաճախակի ելույթ ունենալով փեղի ռադիոյով: Հետո փեղափոխվում է Երևան: Հայֆիլիարմոնիայում կազմակերպվում է ժողովրդական գործիքների անսամբլ, որի մեներգիչներն են եղել Արաքսյա Գյուլզադյանը և Մանիկ Դոլգորուկյանը:

Արամ Մերանգուլյանի հրավերով, որպես մեկնակարար մինչև 1964-ը նվագում էր Հայաստանի ռադիոյի ժողովրդական գործիքների անսամբլում, կատարելով բազմաթիվ չայնագրություններ, վերականգնելով Շիրակի շար պարեղանակներ ու մեղեդիներ: Անցյալի հետ ավանդական կապը չիզելու արտահայտություն է «Առավոտ լուստ»-ն, «Մահարի» հայտարարելը:

Հաճույքով են հիշում ժողովրդական արտիստ (1961 թ.), դուդուկահար Լևոն Մադոյանի (10.08.1909-19.09.1964) հետ Հայաստանի ռադիոյի ժողովրդական գործիքների վաստակավոր անսամբլում կարճ ժամանակով համարեղ աշխատանքը (1961 թ.), որը հնարավորություն է ընճեռել ուսումնասիրելու երաժշտի արվեստն ու մարդկային նկարագիրը: Արժանապարիվ պահվածքը շրջապարիկ հաղորդում էր հավասար, բարություն՝ վայելում հարգանք ու հեղինակություն:

Ավանդապահ գյումրեցու բարբառով խոսքաչեն ու ժողովրդական խառնվածքն առավել սիրելի էր դարձնում վարպետին, իսկ նրա ներկայությունը՝ հաճելի պահեր:

ՎԱՋ ԳԵՆ Ա.ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՏՈՒՑԱԾ ՎԵՐՋԻՆ ՊԱՏԱՐԱԳԸ

Սուրբ Էջմիածին, **հունվարի 6, 1994 թ.**: Սուրբ ծննդյան և Աստվածաշիրանության փոնի առիթով Մայր Տաճարում փոնական փրամադրություն էր: Հայաստանի Անկախության հռչակումից հետո առաջին անգամ հայոց Պարագարգի արարողությունը պետք է հեռարձակվեր Հայկական հեռուստատեսությամբ, որին առաջին անգամ ներկա էր լինելու Հայաստանի կառավարությունը, ՀՀ առաջին Նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը: Ընդունված ավանդույթի համաձայն Աստվածաշիրանության փոնի պարարագիչն էր Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը:

Մայր Տաճարի երգախումբն առանձնահատկ պարասխանապարությանը պարասար է սրբազան արարողությանը:

Ժամը 10.45 է: Գողանցում էին Մայր Տաճարի զանգերը, ազդարարելով փոնական հանդիսության սկիզբը: Հոգևորականների և Ծննդարանի սաների ուղեկցությամբ Վեհարանից Տաճար է ուղևորվում պարարագիչ զգեստով Հայոց Վեհափառը, շրջապարված հյուրերով և ժողովրդի հազարավոր ներկայացուցիչներով:

Երաժշտական ԳԱՅԱՍԱՆ 1(54)2018

Հանրապետության Նախագահը շքախմբով փաճարում րեղ էր զբաղեցնում Վեհափառի գահի հարևանությամբ:

Վեհափառի մուրքը փաճար երգչախումբը՝ րոդերիս հեղինակի ղեկավարությամբ, «Հրաշափառ» շարականի հանդիսավոր երգեցողությամբ ողջունում է Վեհին, րեղ զբաղեցնելու Մայր խորանի հարևանությամբ: Մի քանի մեյր է բաժանում երգչախումբը կառավարության անդամներից, մոռանալով պահի մեծ պարասխանավորությունը, մրկելով Պարարագի երաժշտության վերերկրային հրկչողականություն արտահայտող միջավայրն սկսեցի ղեկավարել Պարարագը, որին չգրում էի հաղորդել իմ հույզերը, այն րեսանելի դարձնելով չեռքերի շարժումներով, որին պարասխանում էր երգչախումբի յուրաքանչյուր երգիչ իր մասնագիտական ներդրումը կարարելով: Երգչախմբի երգեցողությամբ հաճույքի բավարարվածության և շնորհակալության հայացքով պարասխանում էին կառավարության ներկայացուցիչները: Վեհափառն իր բաժին երգեցողությունը փոխարինում էր «թիվ» ասելով՝ (ասերգով) արտասանելով իր բարոզ ողջույնի խոսքը գրավոր էր ներկայացրել: Երբ սարկավագը բարոզ ողջույնի գլանաչև փաթաթված հանչնեց Վեհափառին, Վեհն անխոս զարմանալով հասկացնում էր վերջինիս, որ այն պերք է նախորոք բացված վիճակում իրեն հանչնել, մանավանդ այդ կարարվում էր կառավարության անդամների և միլիանավոր հեռուարադիրողների ներկայությամբ: Ինքը բացելով բարոզի ողջույնի գլանավորված թղթապանակն սկսեց ընթերցել իր ոսկեհնչյուն հաճելի չայնով և յուրովի առոզանությամբ: Այդ օրը Վեհափառն առանչնահարուկ հմայիչ էր ու գեղեցիկ: 1994 թվականի հունվարի 6-ին Ծննդյան Մուրք Պարարագը եղավ Վազգեն Առաջինի մարուցած վերջին Պարարագը Մայր Տաճարում: Ես միշտ հպարտությամբ եմ հիշում այդ օրը, որն ինչ համար պարմական պահ էր և հիշողություն: Այնուհետև Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի առողջական վիճակն օրըսօրե վարանում էր և 1994 թվականի օգոստոսի 18-ին առավորյան ժամը 7, 15-ին վախճանվեց: Օգոստոսի 28-ին կարարվեց հուղարկավորությունը: Մայր Տաճար մուրքը հարուկ անցագրով էր կարարվում: Ներկա էին ՀՀ կառավարության Նախագահը, Դեսպաններ, հյուրեր:

Մայր Տաճարի երգչախումբը փաճարի հարավային կողմում գրկվող խորանում էր: Հուղարկավորության Պարարագը հաղորդվում էր հայկական հեռուարաբեությունը և ռադիոյով: Երգչախումբը իմ ղեկավարությամբ հնչեցնում է Մակար Եկմայրանի բազմաչայն հայոց Պարարագը: Հուղարկավորության արարողության ամբողջ չայնագրությունը և րեսագրումը կարարում էր հայկական հեռուարաբեությունն ու ռադիոն, որպես պարմական իրողություն և փասարթուր: Թեև րիտուր, բայց կարևոր փասար է ինչ համար այդ պարմական իրադարձության մասնակից և կարևոր ներդրում կարարած անչի:

Ռադիոյի չայնագրությունները (6 փաթեթ) պահ-

վում է Հայասրանի պերական ռադիոյի ոսկե ֆոնդում, որոնց վրա նշված է նաև իմ անուն, ազգանունը, որպես Մայր Տաճարի երգչախմբի ղեկավարի:

Հարուկ հրավերով դուրուկահար Ջիվան Գասարյանը, քանանչահար Հրաչյա Մուրարյանը, դուրուկահար Լևոն Արչակյանին Ծվեյցարական "Swissair" ընկերության օդանավով 1999 թվականի հոկտեմբերի 22-ին մեկնեցին Յուրիս, որպերից ժամը 11.25-ին, այլ ինքնաթիռով՝ Միլան:

Օդանավից երևում էին Ալպյան սրածայր և ժայռոտ լեռները:

Միլանը մեզ դիմավորեց անչրևոտ ու մառախլապար եղանակով: Միլանից մեկնեցինք Պարմա ճա-



Ջիվան Գասարյան, Գովհաննես Դարրինյան, Դրաչյա Մուրարյան, 1999 թ.

նապարհը բարեկարգ էր: Տաքսիով կայարանից դեպի Teatro Regio Di Parma դահլիճ մեկնելիս վարորդին երաժշտական րերմիներով իմ խոսելը զարմացրեց և Ջիվանին և վարորդին. «Դու իտալերե՞ն էլ գիտես, հարցին, ասացի «Երաժշտական տեսության դասագրքի տերմիններից այն կողմ չի անցնում իմ իտալերենի իմացությունը»: Ամեն դեպքում ինչ որ բան բացարեցի վարորդին: Դահլիճը գրկվում էր դիրիճոր Արթուրո Տոսկանինի փողոցին հարող րեղում: Համերգ գնում էինք քայլելով երեկոյան Պարմայի հնագույն, նեղլիկ փողոցով, հանկարծ ուղեկցողուհի հունգարացի երգչուհի Եվան կանգնեց եռահարկ հին շենքի մուրքին և ասաց. «Այս շենքը Պարմայի կոնսերվատորիան է (ընդամենը մեկ մուտք), այստեղ դասավանդել է Ջուզեպպե Վերդին և այս դռնով էլ ելումուտ է արել»:

Բոլորս հուզվեցինք: Ես չեռքերով հպվեցի այդ դռանը մրովի հաղորդակից լինելու մաեարոյի հեր և զգալու նրա չեռքերի «հերքը»:

Այնուհետև ընթերցինք այն ճաշարանում, որպեր ուղեկցողուհուներին հաճախել է Ջ. Վերդին: Ընթերքի սեղանին ներկա էին իրալացիներ, որոնց «Կոմիտաս կատարելո՞ւ եք» հարցը զարմանալի էր: Նահասրեսված ծրագիրը իսխարելով Ջ. Գասարյան ասաց. «Հովհաննես, Կոմիտաս նվագի»: Համերգը մեծ հաջողությանը անցավ:

Հոկտեմբերի 24-ին, Թուրինի «FIAT» ավրոգործարանի արարադրամասերից մեկը վերածված էր երաժշտական րոնավանառի, որպեր ուցուցադրված էր նաև Անրոնիո Վիվալդիի սրեղծագործություններից մեկի պարրիպուրի մի էջ (պարմենը): Իմ Վիվա լրի, Վիվա լրի բացականչությունը հպարտության զգացում առաջացրեց ներկաների շրջանում:

Երաժշտական ԳԱՅԱՍՏԱՆ 1(54)2018

Տեղի ջութակահարների անսամբլի հետ Ջիվանը նվագեց անսամբլի ղեկավար կոմպոզիտորի սրեղ-ժագործությունը: Ունկնդիրներին հիացրեց դուդակահարի իմպրովիզի անթերի կատարելու վարպետությունը: Նա անսամբլի նվագած թեման կրկնում էր երաժշտականորեն հագեցած և հուզականությամբ: Համերգից հետո ցանկանալով իմ կարծիքը հարցրեց «Վարպետը դու ես» պատասխանիս, շարունակությունից, «Ես քո կարծիքն եմ ուզում»: «Գիտե՞ի՞ր այդ երաժշտությունը» հարցիս՝ «ոչ» պատասխանեց:

«Դու նրանցից լավ էիր նվագում, բոլոր առումներով» պատասխանեցի:

Հոկտեմբերի 25-ին Միլանից մեկնեցի՞ր Տրենտո: Գնացքը պսակում էր գեղարեսիլ կիրճով հոսող լայնահուն Պարմա գետի եզերքով, որտեղ մեր համերգը ունեցավ րեդի համալսարանում: Համերգին ներկա էր մեր հայրենակից, պրոֆեսոր, հայագետ Լևոն Զեքիյանը: Առավոտյան մեքենան պսակում էր Միլան, որտեղից ինքնաթիռով Բեռլին մեկնելու համար:

Ջիվան Գասպարյանի հետ համփորդելը հանելի է, լավ զրուցակից, հոգալար ու առարաչեռն:

(*տե՛ս կազմը*)



Սողոմոն Սեյրանյան

Հայ նվագածուների նվագախմբի առանցքը արևելյան երաժշտությունն է իր «ադաքներով»: Որքան խորն է «ադաք» զգացողությունը, նույնքան մեծ է գնահատանքն ու հարգանքը: Յուրաքանչյուր նվագարան ունի իր հնչյունի արտաբերմանը «հարազատ» նաև երաժշտություն:

Նվագածուների սիրելի մեղեդիներից են Սայաթ-Նովայի սրեղձագործությունները: Թառախարները նրա «Աշխարհումս ախ չիմ քաշի» երգի մեղեդին հնչեցնելիս զայրակղվում են նրա «Մահուր» մուղամի հնչյունաշարի խրոփար փրամադրությամբ, որի կատարման ընթացքում նվագածուն «սուզվում է» մեղեդու փայլունքներում, ցուցադրելով թառք փրամադրելու, նաև հնչողությունից բխող հնարքներ հորինելով:

Թառախար Սողոմոն Սեյրանյանի հնչեցրած հայկական ժողովրդական «Մանկալ» երգի մեղեդին երանգավորված է «Սեզախ» մուղամի ելևէջներով, որ ներկայացվում է որպես հուզականության բացառիկ ներազդիչ միջոց: (Գոյություն ունի Իրանի, Թուրքիայի, Ադրբեջանի «Սեզախ»-ներ («Սեզահ, Միկյահ, Սեզան»), որոնք հնչյունաշարային և մեղեդային անկախ մրաժողություն են):

Դուդուկահար Լևոն Մադոյանը Շիրակի երաժշտական ավանդույթների անխառն արտահայտիչն է, հայկական գեղջկական երգը ներկայացնողը:

Գեղջկական երգը ջիւջ է ու թափանցիկ, պարզ ու անմիջական: Այն դուդուկի նվագակցությամբ կորցնում է իր բնական հարկանիշները: Դուդուկը «ողբում» է, զաղրնախորհուրդ «նենգ» հնչողությամբ, մասնավորապես դամի առկայությամբ, իսկ նագուկ գեղջուկ երգը՝ «կարկաչուն»:

Ժողովրդական ճշմարիտ երգերը թող հնչեն առանց նվագարանի, իսկ դուդուկը հսկողն է զա ըստ պատշաճի:

Քսենոնահարների և ուղահարների «հայացքը» ուղված է դեպի Մերձավոր Արևելք: Այնտեղ են որոնում իրենց երաժշտական «սփոփանքը», այնտեղից սիրովոք բազմազգ «խառնարանի» երաժշտությանը հազուրդ է փախն նրանց երաժշտական հակումներին: Թեև քսենոնի համար սրեղձովեցին մեծածավալ սրեղձագործություններ, այնուամենայնիվ նրանց փարերքն արևելյան երաժշտական ավանդական ժանրերն են. «Թաքսիմ»ը, «Նեհավենդ»ը, «Միկյահ»ը, «Ուշակ»ը, «Էյուրդի չիջազբեր»ը, «Հուսեյինի»ն, «Լոնգա»ն, «Չիֆթերթելի»ն, «Պորբասպար»ը և այլ երաժշտարեսակները:

Քամանչայի նագուկ, փիրուն, լուսավոր թախիժով հնչյունն արդյունք է նաև գործիքի արչագանձարանի խոռոչը ծածկող կենդանական թաղանթի բնական հարկանիշի:

Նվագարանի արժեքավորող և իր երաժշտական մրաժողության հանրագումարն է չգերազանցված քամանչահար Սաշա Օզանեզազվիլու (Ալեքսանդր Օհանյան) կատարած (1912 թ.) մուղամները՝ «Հունայուն», «Ռասար», «Չարգյահ», որոնք Օզանեզազվիլու «մաքրակենցաղ», լուսավոր հնչերանգի և բարեկիրթ մրաժողության շնորհիվ առավել հայկական երանգ ու շունչ ունեն:

Մնում է զինվե՞ր հայ երաժշտության ճշմարիտ մրաժողությամբ, չգայթակղվե՞նք ծափերի «հրավառությամբ», ծառայե՞նք մեր «անպաշտպան» երաժշտության «պաշտպանության» վսեմ նպատակին:

ԿԱՏՎԻ ԽԱՂԸ, ՀԱՄԵՐ ԳԻ «ՄԱՀԸ»

Հայաստանի երգչախմբային ընկերության երգչախմբի խմբավար էի: 1970 թ. ապրիլի 12-ին, Հայֆիլհարմոնիայի համերգային փոքր դահլիճում (այժմ Ա Բաբաջանյանի սևւ.) կայացավ Պարույր Սևակի «Անլռելի զանգակարուն» պոեմի գրական երաժշտական երեկոն: Այդ երեկոյի երգչախումբը ղեկավարելու պարիվն ինչ էր վարահված: Համերգ-երեկոյի ընթացքում պոեմը կարդում էին ասմունքողներ, ՀՀ վաստակավոր արտիստներ Թամար Դեմուրյանը և Ալեքսանդր Ադամյանը: Երեկոյին մասնակցում էին մեներգիչներ Մելանյա Արովյանը, Խորեն Պալյանը, Հայֆիլհարմոնիայի լարային քառյակը՝ Լևոն Մանիկոնյան (առաջին ջութակ), Մարտին Երիցյան (երկրորդ ջութակ), Արթուր Սուրբանյան (ալյո), Ֆելիք Միմոնյան (թավջութակ) կազմով: Գրական երաժշտական երեկոյին մեջընդմեջ հնչում էր Կոմիտաս վարդապետի «Սոնա յար», «Միփանա քաջեր», «Փեսին գովքը», «Գարուն աս», «Գութանի երգ», «Անչրև եկավ», խմբերգերը և Մա-

երաժշտական ԳԱՅԱՍՏԱՆ 1(54)2016

կար Եկմայրանի «Պարարագ»-ից «Սուրբ, Սուրբ»-ը: Երեկոն ընթանում էր իր հունով, երբ Թ. Դեմուրյանն իր խոսքով շայնով արտասանում էր պոեմի հուզիչ տողերից «Գարուն էր, չեկած ամառ, փուլ եկավ երկնակամար, ձյուն մաղեց մեր բաց գլխին, ձյուն մաղեց կրակի պես... գարուն ա, ձյուն ա արել» հարվածը, քառյակն սկսեց նվազել Կոմիտաս վարդապետի «Գարուն ա» խմբերգի նախաբանը, ես պարասարվում էի դեկավարել երգչախումբը:

Հանկարծ դահլիճի խորքի դռնից ներս խուժեց մի սև կապույտ կապուռ, դահլիճի կենտրոնական միջանցքով, գռռալով, սրբնբաց վագրով ցարկեց դեպի բեմ, հայրնվելով նվագողների ուրբերի և նուրակալների չողերի միջև: Փախուստի ելք փնտրող կենդանին հայրնվելով «ծուղակում» անկանոն շարժումներով խուճապի էր մարտնում երաժիշտներին: Երբ կարուն հայրնվեց Լ. Մամիկոնյանի զբաղեցրած աթոռի փակ, ցարկուրելով գալարվեց, Լևոնը մի չեռքում ջութակը, մյուսում աղեղը պահած ցարկեց աթոռից՝ մոռանալով «նվագն ու պոեմը»: Խուճապահար կենդանին կարողացավ կողմնորոշվելով ձողույրել և անհետացավ երգչախմբի հետևում:

Երաժշտությունը դադարեց, ապա ծիծաղ ու աղմուկ բարձրացավ: Իրար «բախվեցին» պոեմի ողբերգական փրամադրություն արտահայտող տողերն ու սրեղծված արհեստական «զավեշտական» վիճակը: Տիրեց «գիրակցված» լռություն: Թ. Դեմուրյանը շարունակեց արտասանությունը: Մի քանի րոպե անց, երբ հնչելու էր «Անչրեն եկավ» խմբերգը, թեքվելով դեպի երգչախումբը ակննարես եղա, թե ինչպես կարվի «փայլուն հյուրախաղից» առողջական խնդիր «չեռք բերած» արտիստին «որպես ռազմաճակատում վիրավորված զինվոր» ի իջեցնում էին բեմահարթակից: Տեսարանը կարծես շարունակությունն էր քիչ առաջ «Գարուն ա» խմբերգի կարարման պահին սրեղծված փրամադրության զարգացում էր շեքսպիրյան ողբերգություններին բնորոշ ընթացքով: «Անչրեն եկավ» խմբերգի «հորդառար» ջրով ողողելով «ախարահանվեց» փխուր փրամադրությունը:

Միփարակասն այն էր, որ «Անրելի զանգակափան» հեղինակը ներկա չէր երեկոյին: Վերջապես առեղծված մնաց կապույտ կապուռի հայրնվելը դահլիճում: Իսկ այդ օրվա գրական-երաժշտական երեկոն իմ հիշողության մեջ մնաց որպես «կարվի խաղը, մկան «մահը» ասացվածքի «Կարվի խաղը, համերգի «մահը» փարբերակով:

ԱՐԱՄ ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ 125-ԱՄՅԱԿԻՆ

1956-ի դեկտեմբերին, Երևանի Ա Սպենդիարյանի անվ. օպերայի և բալետի պետական թատրոնում կայանում էր **հունիսի 2-ից 12-ը** Մոսկվայում տեղի ունեցած հայ արվեստի և գրականության փաստօրյակի եզրափակիչ համերգի կրկնությունը:

Ինչ՝ Ռոմանոս Մելիքյանի անվ. երաժշտական ուսումնարանի առաջին կուրսի սովորողի համար հետաքրքիր և ուսանելի էր համերգն իր ամբողջու-



Արամ Խաչատրյան, Արամ Տեր-Չովհաննիսյան, Էմմա Ծատուրյան, Երևան, 1958 թ.

թյամբ, մասնավորապես խմբերգային արվեստին ծանոթանալու առումով:

Չունենալով երաժշտական լիարժեք գիտելիքներ և խմբերգային արվեստի մասին որոշակի պատկերացում, երբ բացվեց վարագույրը, երգչախմբի երգիչների՝ պիկվիկներ հիշեցնող զգեստները տեսնելով զգացի, որ «գործ ունեմ» լուրջ արվեստի ներկայացուցիչների հետ: Այն առավել ընդգրծվեց, երբ բեմի աջ կողմից հանդիսավոր քայլքով ներս մտավ կարճահասակ, սպիտակահեր մի ծերունի, արժանապարհիվ խոնարհիվեց, ցարկով բարձրացավ իր համար բեմի կենտրոնում տեղադրված քառանկյուն պարվանդանի վրա, մի պահ կենտրոնանալով չեռքերը մեկնեց դեպի բեմի խորքում շարված երգիչները, որոնց կտրուկ շարժմանը հաջորդեց խրոխար «Չիզ րու, քաշի» երգը, որը դեռ 50-ականների սկզբին երթեմն լսել էի մեր բնակարանի պարին ամրացված ռադիոյով: Այդ անհնավորությունը Արամ Տեր-Չովհաննիսյանն էր:

Անցան փարիներ, ավարտեցի երաժշտական ուսումնարանը, Կոմիտասի անվ. ԵՊԿ խմբավարական ֆակուլտետը և 1969թ. մրցույթով ընդունվեցի Հայաստանի երգիչների ընկերության երգչախմբի խմբավար: Մինչ կկայանար մրցույթը, տեղեկացանք, որ Ա. Տեր-Չովհաննիսյանը երգչախմբի դեկավար Էմմա Ծատուրյանի կողմից հրավիրված է որպես խորհրդարու:

1969թ. փետրվարի 9-ին պարվիրված ավտոբուսով մեկնեցինք օդանավակայան: Դիմավորողների մեջ էին Էմմա Ծատուրյանը, երաժշտագետ Յիցիլիս Բրուտյանը, երգչախմբի մի քանի երգիչներ:

Երբ օդանավը վայրէջք կարարեց, աստիճաններից զգույշ քայլերով իջնում էր այդ ծանոթ ծերունի իր փիկնոջ հետ: Ներկաները ծափողջույններով դիմավորեցին վարպետին, իսկ երաժշտագետ Յիցիլիս Բրուտյանն արտասուեց. «Արամ Արտեմիչ, հայրենի հողը սպասում էր Ձեր ոտքերի հետքերին...»:

Մեքենան կանգ առավ «Արմենիա» հյուրանոցի մուրքի մոտ: Նախաարահում հետևում էի նրա մըրքերին: Երբ խոսք գնաց նրա անվան ծագման վերաբերյալ, Ա. Տեր-Չովհաննիսյանն ասաց, որ այն <...> ծագում ունի, երբ հայրնեցին իրեն հարկացված սենյակի 205 թիվը, որպես փորձառու շրջագայող արվեստագետ ասաց, որ երկրորդ հարկում է՝ բացարթելով, որ հյուրանոցների սենյակների համարակալումն սկսվում է հարկը նշող թվանշանով:

Մեկնալով մաեստրոյի օրարագի հեզահամ-

բույր կինը շնորհակալական խոսքեր էր ուղղում Երզնասիմոնյանի ընկերության նախագահ Է. Ծափուրյանին, իրենց Երևան հրավիրելու համար և բարեկեցիկ վիճակ ակնկալում կենսաթոշակի անցած ծերունիների համար: Հաջորդ օրը՝ **փետրվարի 10-ին**, ժամը 14-ին երզնասիմոնյան սպասում էր մեծ վարպետին: Երզնասիմոնյանի ընկերության «Վոլգա» մեքենայի դուռը բացվեց և իջավ Ա. Տեր-Հովհաննիսյանը՝ Է. Ծափուրյանի ուղեկցությամբ: Երբ նրանք Հայֆիլիարմոնիայի մեծ դահլիճի երևանույրքից ներս մտան, ներկաները ծափահարություններով զարդարեցին վարպետի դանդաղ, բայց և հանդիսավոր «երթը»: Նրանք գրկում, համբուրում էին իրենց վաղեմի փառանդավոր ղեկավարին, իսկ վարպետը ժպտերես ողջունում էր նրանց՝ ուրքերն ուղղելով դեպի աստիճանները, որոնք տանում էին երկրորդ հարկում գրկվող երզնասիմոնյան երգիչների՝ անհամբեր սպասումով համակված փորձարար:



Դիրիժոր՝ Գովհաննես Դարբինյան

երզնասիմոնյան արվեստը «ներմուծել» արքայազնության հնչարարներուններ, որոնք 20-ականների սրբաբան արքայազնության միջոցով օգտագործվեցին այդ սերնդի կոմպոզիտորների կողմից:

Վերջապես Ա. Տեր-Հովհաննիսյանը մտավ փորձարար. բոլորը ոգևորված են, երզնասիմոնյան կազմի մեջ ընդգրկված վարպետի վաղեմի երգիչ-երգչուհիները կարողակեց գրկում, համբուրում են իրենց կուռքին, մեկն ազարտում է նրան ձմեռային վերարկուից, մյուսը հարգալից վերցնում է գլխարկը... Բոլորը, բոլորը ցնծության մեջ են, միայն ինքը՝ մատարուն չի կարողանում կենտրոնանալ այս իրավիճակում և հավասարակշռված պահվածք ընդունել (այս պահը ես նկարահանել եմ սիրողական տեսախցիկով - Հ. Դ.):

Երզնասիմոնյան արական կազմը պարտապարտ էր մասնակցելու Լեհաստանի Բիրզոչյա քաղաքում 1969թ. սեպտեմբերին կայանալիք հոգևոր երաժշտության (այն փարիներին՝ միջնադարյան երաժշտության) միջազգային փառատոնին: Այդ նպատակով երաժշտագետ Ռոբերտ Աբայանը հայոց շարականների փարբեր չայնեղանակներից կազմեց մի ծրագիր, որի իրականացումը հանձնարարվեց Ա. Տեր-Հովհաննիսյանին: Վարպետը մեծ սիրով էր լծված այդ գործին և անում էր հնարավորը, որպեսզի այն ներկայացվի բարձր մակարդակով: Իր երաժշտական պահանջը պարկերավոր դարձնելու համար ասում էր. «Նստած պիրի ծնես»:

Մի քանի խոսք արքայազններով՝ Ա. Տեր-Հովհաննիսյանը բազմեց բազկաթոռին՝ հայացքն ուղղելով դեպի երզնասիմոնյան: Ես սպասում էի Ա. Տեր-Հովհաննիսյանի պարապելու եղանակին և հարկապես սպուռելու, պարզելու ինչ համար մի «առեղծվածք». փարիներ առաջ նրա կատարած Կոմիտասի խրմբերգերի ընդգծված շեշտերն արդյոք իր զգացողությունն են, թե՞ հեղինակի նշանները (որովհետև Կոմիտասի նշանները նրբագիծ են հնչողություն են պահանջում):

Երբ երգում էինք Սյրեպիանոս Մյունեցու (VIII դար) «Սա է բանն Աստված» շարականը, որին հաջորդող նույն հեղինակի «Տէր զլուր քո լվա է» շարականը, Ա. Տեր-Հովհաննիսյանը հիացական ժպիտը դնեքին ասաց. «Տեսե՛ք, ի՞նչ գեղեցիկ է»: Երբ փորձում էինք Մակար Եկմալյանի բազմաշայնած «Հայոց Պարարագ»-ից «Ամեն, Հայր Սուրբ»ը, վարպետը հոգոց հանելով ասաց. «Վերջապես մենք այս երաժշտությամբ ենք դաստիարակվել», ավելացնելով՝ «Թիֆլիս այցելած Մկրտիչ Խրիմյան Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում ունեցավ Ներսիսյան դպրոցի ուսուցիչների և աշակերտության հետ: Մեր երզնասիմոնյան ղեկավար Մակար Եկմալյանը ինձ առաջ հրելով ասաց. «Արամ, երգի՛»: Երբ երգեցի՝ «Հայրիկ, հայրիկ, քո հայրենիք Վասպուրական մեր աշխարհ» երգը, հուզված վեհափառն իր մոտ կանչելով աջով շոյեց գլուխս»:

Վարպետն սկսեց փորձը. Կոմիտասի «Աի, մարալ ջան» երգն էր: Նրա երգեցողությունից պարզ դարձավ, որ մատարուն իր զգացողությունն է «տեղայնացնում» կոմիտասյան պարպիրություններում: Իմ ակննդին հնչում էին նրա մեկնաբանած, շեշտավորված, առողջ գույները, որոնք համոզիչ էին և գեղարվեստորեն ապացուցված:

Ա. Տեր-Հովհաննիսյանը երզնասիմոնյան փորձերը «համեմտում էր» իր հիշողություններով: Մի առիթով հիշեց՝ «Քրիստապիտր Քուշնարյանի հետ Չանգեզուրում ժողովրդական երգեր գրի առնելու ժամանակ Քուշնարյանը մոտենալով օդի թորոդ գյուղացուն, հարցրեց՝ «Էս ի՞նչ ես անում», «Թոթի արաղ եմ քաշում»՝ ասելով մի բաժակ օդի մեկնեց, Քուշնարյանը ակամա օդին կոնծեց, չգուշակելով հեղուկի թն-

Երզնասիմոնյանի փորձերը շարունակվում էին: Ընդմիջումներին երգիչները շրջապատում էին վարպետին՝ նրա գլխին «հարցերի փարապի տեղադրով»: Իմ հարցադրումը նրա մեկնաբանած Կոմիտասի «Կուժն առա», «Գնա, գնա» խմբերգի հա՛, հա՛ հա՛ բացակասությունները, որպես ծիծաղի, քրքիչի կենդանի վերարտադրություն լինելու մասին էր... : «Իհարկե, տղաս, եթե հա՛, հա՛-ները որ կարելի էր նաև որպես ծիծաղ ընդունել, ինչու՞ այն որպես մարդկային ծիծաղ կենսափիլիսոփայական արտահայտություն չհնչեցնել», - պարասիսանեց վարպետը:

Այնպես որ, վարպետը դեռ 50-ականներին էր

դուրբան աստիճանը՝ բերանը բաց մնաց մի պահ»:

Եկավ սպասված սեպտեմբերը և մեր երգչախմբի արական կազմը Է.Ծափուրյանի ղեկավարությամբ Բիրզոչի (Լեհաստան) փառաբանում գրավեց առաջին տեղը: Այդ օրերին Ա.Տեր-Հովհաննիսյանի ծննդյան օրը նշվեց իր փոքրիկ սենյակում: Ներկա էին երգչախմբի ղեկավարը, երգիչներ, հանկարծ ներս մտավ երկու շեռքում կարմիր գինու շերտ գրկած երգիչ Պավել Լիսիցյանը և նստեց իմ կողքին: Ընդհատվելով Ա.Տեր-Հովհաննիսյանին՝ լիսիցյանը շեշտեց, որ կարմիր գինին կնպաստի ծերունի Արամ Արսենիչի արյան շրջանառության կարգավորմանը: Նրանց խոսակցությունն ուսուցչի և աշակերտի հարաբերություն էր: Պ. Լիսիցյանը խոսելիս չայնն արտաբերում էր քիմքով՝ չայնալարերը չձանրաբեռնելու ակնհայտ ցուցադրումով:

Ա.Տեր-Հովհաննիսյանի կինը վերադարձավ Լեհիզորադ (Ս.Պետրեբուրգ): 1969-ի աշնանը տեղի ունեցավ Կոմիտասի ծննդյան 100-ամյակին նվիրված խմբերգային երաժշտության համամիութենական փառաբան, որի բացման պարիվը տրված էր Հայաստանի Երգչախմբային ընկերության երգեցիկ խմբին: Նոյեմբերի 11-ի համերգին երգեցիկ խումբը ղեկավարեց նաև Ա.Տեր-Հովհաննիսյանը՝ հնչեցնելով իր սովորեցրած Կոմիտասի «Աղոթք Տերունական»-ը և «Բինգոլ»-ը:

Երգչախմբի կազմում բեմի վրա հեղուկ էի, թե ինչպես բեմ մտնել վարպետը, կանգնեց քառակյուն պարվանդանի վրա, բանկոնի շախ գրպանից հանեց կամերպոնը, այն հարվածեց շախ շեռքի ափին, մտրեցրեց այդ ականջին, հանդիսավոր շարժումով մխրճեց գրպանի մեջ՝ մաքուր ինյունացիայով հնչեցրեց չայնաբաժինները և իր փոքրիկ փափուկ շեռքերով ազդարարեց սրելիճագործության մուրփը: Երգչախմբի փորձերը շարունակվում էին: Չունենալով մշտական փորձասրահ, փորձերը տեղի էին ունենում Հայաստանի ժողովրդական երգիչարի և օպերայի երգչախմբերի փորձասրահներում:

1970-ի վերջին Ա.Տեր-Հովհաննիսյանի առողջությունը վարացավ: Երևանի Աջափնյակ կոչվող թաղամասում նրա համար մեկ սենյականոց բնակարան էր վարձված: Նույն շենքում բնակվող խմբավար, երաժշտագետ Յուրի Յուզբաշյանն ու իր վրացուհի կինը՝ Իրինա Կուշաշվիլի-Յուզբաշյանը, գուրգուրանքով խնամեցին մեծ երաժշտին մինչև նրա վերջին շունչը: Երգչախմբային ընկերությունն իր անդամներից (երգչախմբի երգիչներից) հերթապահություն էր սահմանել:

1970թ. **դեկտեմբերի 20-ն** էր: Ավարտվել էր մեծ երաժշտի կյանքը: Խմբավարներից կազմված հուղարկավորողներն ու հասարակությունը վերջին հրաժեշտը տալով մեծ վարպետին, նրա աճյունը դուրս բերեցին Հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճից՝ Սայաթ-Նովայի փողոցով ուղևորվելով դեպի քաղաքային Պանթեն: Այստեղ սգո միտինգը բացեց մշակույթի այն ժամանակվա նախարար, գրող Գուրգեն Բորյանը: Այդ նպատակով նախարարված ռադիոժառանգության մեքենայի բարձրախոսով հն-

չում էր Ա.Տեր-Հովհաննիսյանի ղեկավարությամբ Հայաստանի պետական երգչախմբի կարարումներից՝ հարվածներ Յ.Ս. Բախի «Սի միևր Մեսսա»-ից:

Մի քանի տարի անց, երբ այցելեցի Արամ Տեր-Հովհաննիսյանի շիրիմին, ի գարմանս ինձ, այն պարվանդանի տեղը, որտեղ գրող Գուրգեն Բորյանը մահախոսական էր կարդում, արդեն նրա շիրմաքարն էր գրադեցնում:

**Պ Ա Տ Մ Ո Ւ Մ Է
Ա Վ Ե Տ Ի Ք Ի Ս Ա Հ Ա Կ Յ Ա Ն Ը**

«Ասում են, իբրև թե Իսահակ Նյութունն ամուսնացել այսպես. տարիքն անցել է, մայրն ասում է, ժամանակն է, որ ամուսնանա: Այո, համաճայնել է Նյութունը, բայց ո՞նք հեղ: «Այդ արդեն դու պիտի ընտրես», ասում է մայրը: Ընտրել է, մի՞թե Նյութունը մեկ րոպե կարող է թողնել իր գիտական զբաղմունքը: Մտնում է լաբորատորիա, տեսնում մի աղջկա. «Կցանկանա՞ր իմ կինը լինել»: Աղջիկը շփոթվում է, մինչ այդ երազ էր Նյութունը, անհասանելի, իսկ ինքը մի շար սովորական աշխատող և հազիվ կմկմում է. «Գնամ մայրիկիս հարցնեմ»: Մյուս օրն աղջիկը գալիս է մոր համաճայնությունն սրացած, սպասում է, որ Նյութունը կրկնի իր առաջարկությունը, չէ՞, գիրևականն իր խոհերի աշխարհումն է, աղջիկը մի հարմար պահի մտրեկում է նրան.

- Դուք երեկ հարցրեցիք...
- Ուրեմն քե՞զ էր, որ դիմեցի՝ կցանկանա՞ր իմ կինը լինել:
- Համաձայն եմ, - և ամուսնանում եմ:

Գալիլեյը կնոջ հետ գնում է եկեղեցի, պասկվում: Գալիս են փուն, խնջույք, կերտիտում: Երեկոյան ուշ ժամի հյուրերը գույզին բախրավորություն մաղթելով հրաժեշտ են տալիս: Գալիլեյն ինչ որ բան հիշելով դիմում է նոր իր հարկը ուրք դրած կնոջը.

- Անուշիկս դու հանգստացի՛ր, ես կես ժամով գնամ կիսատ թողած ուսումնասիրությունս լրացնեմ:

Եվ նոր շեռք բերած հեռադիտակը բարձրանում է աշտարակ: Տարված է երկնքով, իր նոր հիպոթեզով, աշխարհից վերացած. ժամի, ժամանակի հասկացությունը չուլվել է փիեզերքի անհունության հետ: Գիշերվա ժամը 3-4-ին վերադառնում է, բացում է ննջատենյակի դուռը, տեսնում անկողնում կին է պառկած, շփոթվում է, գրկում է ծառային.

- Այս ի՞նչ կին է մտել իմ անկողին. . . ախր ուզում եմ հանգստանալ:

Ծառան ժպտում է և ծամածռվելով պարասիտանում.

- Պարոն սա Ձեր կինն է, դուք մի քանի ժամ առաջ եկեղեցի գնացիք, պասկվեցիք:

- Ա՛հ, ուրեմն ես իրավունք ունեմ առանց բարոյական նորմերը խախտելու գնալ ու նրա կողքին պառկել՞:

- Պարոն, - քննադատով ասում է ծառան, - ոչ միայն պառկել...

Ներեցեք մնացածը Ձեր գործն է...

Երաժշտական ԳԱՅԱՍՏԱՆ 1(54)2018

Հմայակ Սիրասի «Քսանմեկ տարի Ավետիք Իսահակյանի հետ» հաղորդագրությունից: «Սովետական գրող» հրատ. 1974թ. Տրամադրեց Հովհ. Դարբինյանը

Պատմում է նահիկին վարդապետ, պեղական համալսարանի գրաբարի դասախոս, երգիչ՝ Խորեն Պալյանը.

Անգլիացի գիտնական Իսահակ Նյուբոնը 25 տարի եղել է Անգլիայի պառլամենտի պարզամավոր և այդ տարիներին ելույթ է ունեցել մեկ անգամ, ասելով. «Խնդրում եմ օղանցքը փակեք, փչում է»:

Տրամադրեց Հովհ. Դարբինյանը

Դ Ի Պ Վ Ա Ճ

1959 թիվ: Մոսկվայի Մեծ թատրոնում կայանալու է Ադրբեջանի ՄՍՀ արվեստի և գրականության փաստօրյակը, որին մասնակցում է Ադրբեջանի ժողովրդական արտիստ, հռչակավոր բառահար Դուրբանի Փիրումովը: Ռուս համերգավարուհին ստուգելու նպատակով մտրեմալով Ղ. Փիրումովին հարցնում է. «Ընկեր Փիրումով ի՞նչ ստեղծագործություն եք կատարելու»: «Չաաբուլ» պատասխանում է բառահարը: Քիչ անց հաղորդավարուհին կրկին նույն հարցով դիմում է ժողովրդական արտիստին. «Դուք հիշեցի՞ք, թե ինչ ստեղծագործություն պետք է կատարեք», նորից հեղում է «Չաաբուլ», ինքնավարահ պատասխանում է հռչակավոր բառահարը:

Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ճ Հ Ո Վ Հ Ա Ն Ն Ե Ս Ը Ի Ր Ա Ջ Ի Մ Ա Մ Ի Ն

1984 թ. մարտի 14-ն էր: Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվ. երաժշտական ուսումնարանի իմ դասարանի լուսամուտից նկատեցի, որ դիմացի շենքի երկրորդ հարկի բնակարաններից մեկի պարզգամբի դուռն ու պարուհանները սպիտակ յուղաներկով հապճեպ ներկում են: Տեղյակ էի, որ բանաստեղծ Հովհաննես Շիրազը բնակվում էր այդ շենքում:

Անհանգիստ փազնապեցի...

Վարձանակել էր բանաստեղծը...

Երեկո էր... Երևանի բնակիչներն այցելում էին պոետի բնակարանը: Երկարավուն աստիճաններով հայրնվեցի բնակարանում:

Միջանցքի աջ կողմում հյուրասենյակն էր, որի արևմտյան պատին մեխակներով զարդարված գորգ էր կախված:

14-15 տարեկան մի աղջիկ այլուստին արհեստի մեջ խունկ ծխելով, շեռքերը չայրելու շարժումներով դուրս եկավ սենյակի աջ կողմից, ուղղվեց դեպի միջանցք: Խունկի բուրմունքն ու ծուխն այնպեղ նույնպես փարածելու համար (հավանաբար բանաստեղծի դուարբն էր): Մի քանի րոպե հյուրասենյակի դռների միջև կանգնելուց հետո, քայլեցի դեպի միջանցքի շախ կողմում գրկվող դուռը, այն իմ առջև բացեց բանաստեղծի առանձնասենյակը:

Դռան շախ կողմում պատին զետեղված էր Շի-

րազի հանդիպումների ժամանակ կատարված մեծ լուսանկարը, որի մոտ գրեական պիտույքներով փոքրիկ սեղան կար:

Մենյակի արևմտյան պատի փակ, հարակից շարված էր գրություններով լեցուն, խանութներում կոշիկները պաշտպանելու համար նախապետված սովորաբար փոսիներ, որոնք Հովհաննես Շիրազը օգտագործել էր իր սրեղծագործություններն ու գրությունները շփոթելու և պահպանելու համար հարմար պահարաններ:

28. 03. 2012 թ.

Երևան ստորագրություն

Ո Ր Պ Ե Ս Ջ Ի Հ Ա Ր Ա Ջ Ա Տ Հ Ն Չ Ի Հ Ա Յ Ո Ց Հ Ո Գ Ե Վ Ո Ր Ե Ր Ա Ժ Շ Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը

Հայկական հոգևոր երաժշտությունը հազարամյա իր գոյությանը եղել է մշակութային ուղեկից և ազգայնական առաքելության անմար փարոս: Ունենալով վերընթաց և վարընթաց ժամանակների պահեր նրա ընթացքի սլաքը ուղղված է եղել դեպի վեր: XX դարը, որը հիմնականում հոգևոր երաժշտության պահպանման առումով աննպաստավոր է եղել, եթե չասենք արգելված, հարկապես 1920-ից սկսված՝ եկեղեցահայած քաղաքականության անբարենպաստ պայմաններից բխած: Այս վերաբերմունքն սրեղծել էր կարոտահար նրա նկարմամբ: Այն հնչեցնելու երաժիշտների ձգտումը չէր խրախուսվում, որի հետևանքով աստիճանաբար մոռացություն էր եկնարկվում, որպես երաժշտության փեսակ:

Այս վիճակը շարունակվեց մինչև 1940-ական քվականները, երբ փեղի ունեցավ 1946-ի մեծ ներգաղթը, որի ներկայացուցիչները Երևանի, Սուրբ Էջմիածնի Մայր փառարում սրեղծելով երգչախումբեր, վերականգնեցին հոգևոր երգեցողությունը, ենթարկվելով հեղափոխումների: 1960-ականների սկզբին եղան առանձին, համարչակ անհարներ՝ Լուսինե Չաքարյան, Խորեն Պալյան, Գոհար Գասպարյան, որոնք թեև զգուշաբար փորձեցին բեմ բարձրացնել հոգևոր երաժշտությունը, այն ներկայացնելով որպես միջնադարյան երաժշտություն: Այս շարժումը նոր շունչ հաղորդեց Հայաստանի երաժշտական կյանքին, բորբոքելով հասարակության կարոտահարը, սրեղծելով համապատասխան հոգեվիճակ և երաժշտական նոր մրաժողության ունկնդիր և հավաքավոր:

1960-ականներին վերոնշյալ երգիչները, հարկապես Լ. Չաքարյանը և Խ. Պալյանը եղան այս շարժման ռահվիրաները և մոլեռանդության հասնող իրենց գործունեությանը վերականգնում էին հայկական հոգևոր երաժշտությունն իր փարքեր դրսևորումներով:

Այն չվրիպեց հայ կոմպոզիտորների ուղադրությունից, որոնք մշակումներով և մեծակրավ իրենց սրեղծագործություններում ընդգրկեցին շարականներից հարվածներ: Շարժումը բախ էր առնում: Այն երաժշտական կյանքի անբաժան մասն էր և օրըստօր է ծավալվում էր երաժշտական կատարողական

Երաժշտական ԳԱՅԱՍԱՆ 1(54)2018

ԵՊԿ երախտավոր՝ Հ. Դարբինյան

ժանրի և գործիքահարմարների ծրագրերում, թեև, որպես նոր «խուլան» փարածք, սակայն հետաքրքրություն արեղծած ունկնդիրներ գրավող շարժում: Հոգ չէր այս երաժշտության հուզական ու երանգային, ինչպես նաև չափի ու արագության իմացությունը, կարևորը քարն իստք ասելն էր:

Որպես հայկական ժողովրդական երաժշտության ներկայացուցիչներ հոգևոր երաժշտությանը թեկուզև որպես հեռավոր մի հիշողություն նրա անսովոր, սակայն հարազատ ելևէջներին ականջալուր էին նվագարանային արվեստի ժողովրդական երաժիշտները նաև:

Ժողովրդական նվագարանային արվեստի ներկայացուցիչ, քառահար և խմբավարս ընդհանրական միջավայրում հոգևոր երաժշտությանը սնված և թրծված երաժիշտ, 1977-ին քառ նվագարանով առաջին անգամ «Մելոդիա» մոսկովյան միավորման համար կատարած չայնագրությունների ծրագրում ընդգրկելով Ներսես Շնորհալու «Ամեն Հայր Սուրբ» շարականն անվանելով «Միջնադարյան մեղեդի» և սկիզբ դնելով հոգևոր երաժշտության կատարումը նաև ժողովրդական նվագարաններով հնչեցնելու շարժմանը: Չայնասկավառակի թողարկումը հետաքրքրեց նաև Հայաստանի ռադիոյի համապատասխան (երաժշտական հաղորդումների) խմբագրությանը, նրա աշխատակիցների հրավերով 1980-ին կատարեց Կոմիտասի «Արորն ու փայրակը» և Ն. Շնորհալու «Հոյս հարն նվիրանաց»-ը, այնուհետև «Ի կույս վիմեն»-ը, Գ. Նարեկացու «Հավիկ» փաղը և բազմաթիվ հարվածներ «Պատարագ»-ից:

Հովհաննես Դարբինյանի սկսած շարժումը լայն քափ սրանալով ու այն հնչեցնելու պարտքի զգացում, ունեցավ նաև չիմացության և քնահանության արտահայտություն: Համախ ապավինելով մեղեդու զեղեցկությանը և նվագացանկի հնչողությանը, այդ շարականները հնչում էին որպես հնչյունների շարան, հեռու նրանց մասնագիտական համապատասխան հարկանիչներից:



Հովհաննես Դարբինյան, Շարական անամբը, գեղարվեստական ղեկավար և դիրիժոր Դանիել Երաժիշտ

Շար են նվագում «Հավիկ» փաղը (հարկապես դուրուկահարները) մեղեդուն հաղորդելով նրա էությունից չբխող հուզական (հենվելով մուղամների



Պրոֆեսոր Հովհաննես Դարբինյանի դասարան, կոնցերտմաստեր Իրինա Բադալովայի և ուսանողների, շոջանավարտների հետ, ԵՊԿ, Երևան, 1991 թ.

ներազդիչ երանգներին) և ազգային մրաժողության ավանդույթներին անհարիր արտահայտչականությամբ:

«Հավիկ» փաղի կատարումն ազգային դրսևորում է Հովհաննես Դարբինյանի կատարումը 1981 թ., որում գործիքն իրենից վանել է քառ նվագարանին բնորոշ երանգն ու ընդունված գեղեցկանքն իր օտարտրի ներկայությամբ, որոնց փոխարինել է երաժշտի նուրբ ու փեղեքեքի հետ հաղորդակցվելու հոգու փայտանքները, սկսած ընդունելով ազգային պարկանելությունն ու հավաքի փեսակը:

«Հավիկ» փաղը համախ է հնչում նաև քանոնահարների կատարմամբ, այն նույնպես հեռու և նրա առանձնահատկություններին անտեղյակ, օտար երաժշտությանը կրթված երաժիշտների գործընթաց է՝ չեղ կա, բովանդակություն չկա: Եթե վնասաբեր չէ, օգտակար գործողության գործակիցն էլ հայրնի չէ:

Քամանչահարներն էլ չգտում են իրանց պարտքը կատարել այս ուղղությամբ: Քամանչան որպես «երգող» գործիք իր առավելությունը կարող է ցուցադրել, սակայն նրա հնարավորություններն օգտագործվում են մասամբ՝ լարանցումները «սրբորեն» պահպանում են անդավանան հոգևոր երաժշտությունը հնչեցնելով վերոհիշյալ երանգներն ապահովող աղեղի կադապարված մեխանիկայով, չզգալով կամ անտեսելով շարականի առանձնահատուկ մեղեդային հյուսվածքի պահանջները նվագարանի համապատասխան լարի ընտրության և լարանցումների շահեկան փոխանցումներից:

Խոսելով «Հավիկ» փաղի մեկնաբանման, նաև եվրոպական գործիքներով հնչեցման մասին, որ փեղ այս մեղեդին ենթարկվում է դասական երաժշտության կանոնների ենթակա ելևէջավորմամբ և շեշտադրմամբ չեռք բերելով ոչ քարշրաշխարհիկ ու խորթ հնչողություն:

Ընդունված կարծիքը հորջորջում է ազգային այն երաժշտության առավել ընդունելի հարկանիչներով փոգորված մեղեդի է և վերագրվում է Գրիգոր Նարեկացուն: Նարեկացուն է վերագրվում նաև «Սայլն այն իջաներ» փաղը:

Երաժշտական ԳԱՅԱՍՏԱՆ 1(54)2018

Մասնագիտական կրթության արևելյան նվազարան նվագողներն այն ընկալում և վերարտադրում են այդ արևելյան երաժշտության հուզական և երանգային զգացողությանը, որը կարծես «հավասարիության» րպավորություն է սրեղծում: Փասրն այն է, որ կարծիք գոյություն ունի, թե Նարեկացին ամբաստանվում էր թոնդրակյան շարժմանը հարելուն, իսկ այդ շարժումը համարվել է նաև մուսուլմանական կրոնի Հայաստանում տարածելու փորձ: Այդ գաղափարախոսության րեսական և գործնական փաստեր կարելի է համարել այդ շրջանի երաժշտական մրածողության արգասիք համարվող շար ու շար նմուշներ: Մեր կարծիքով Գրիգոր Նարեկացուն վերագրվող րադերն ավելի ու շրջանում (XIV-XV դարերում) սրեղծագործած երաժշտությունի կամ րադասացների արդեն արմատավորված արևելյան երաժշտությանը րոգորված միջավայրի արդյունք: Ներսես Լամբրոնացին է մոռացությունից հայրնաբերել Գ. Նարեկացուն, իսկ Արշակ Չոպանյանը նրան համարել է հայ ամենամեծ քանասրեղծ: «Հավիկ» և «Սայն այն իջաներ» րադերը մեղեդային և քառալարային շարադրմանը հարում են արևելյան «Սեզան» մուդամին (Արևմտյան Հայաստանի րարածրի) քրիստոնյա հայի հնչեցմանը այն ան-

րոր հուզականություն և հնչյունային երանգ և րամարանություն է չեռք բերում: Լսելով հարևան երկրների երգասացների երգեցողությունն ու նվագակերպը րարակուսում են այդ մեղեդիների հայկականության հավասարիության հարցում, մեղեդիների շարժումը, որ Բարչրայիին դիմելու նպատակ է հեղրասվողում, այն առավել հարիր է ոչ քրիստոնյա հավարացյալի մրածողության: Նման կարծիք են հայրնել Ներսես Շնորհալու (XII դար) «Ի կույս վիմեն» մեղեդու արևելյան լինելու մասին Կոմիտաս վարդապետը և այլք:

Վերջին րասնամյակներին իագերի վերաբերյալ գիտական աշխարություն են գրում մասնագիտական կարծիք հայրնում, Կոմիտաս վարդապետի երգերը երաժշտական լողության քացակայության րարմանով ֆալշ երգելը համարելով կոմիտասագիտություն մասնագիտական հմրության և իրավարեր, այդ գործի գիտակ:

Մենք էլ մեր կարծիքը հայրնենք. իագերը հրնչյունի որոշակի քարչություն չեն ամրագրել:

Ջերեղվելով խոսքերի վանկի չայնավորի վրա, կամ կից՝ երգչին հուշել է մեղեդու ելնեղելու պահն ու խոսքի քնական ուղղություն:

Բանալի-քաներ. Հովհաննես Դարբինյան, Ջիվան Գասպարյան, Հովհաննես Բադալյան, Գ. Նարեկացի, տաղ, քառ, դիրիժոր, հուշեր, համերգ, Պատարագ, Վագգեն Վեհափառ:

Կլաչեղե սղոա: Ованнес Дарбинян, Дживан Гаспарян, Ованнес Бадалян, Г. Нарекаци, таг, тар, дирижер, воспоминания, концерт, Литургия, Вазген Каталкос.

Keywords: Hovhannes Darbinyan, Jivan Gasparyan, Hovhannes Badalyan, G. Narekatsi, fort, tar, conductor, memoirs, Concert, divine liturgy, Vazgen Catholicos

Տեղեղություններ հեղեղակի մասին. ԴԱՐԲԻՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՍՏՈՒՐՅԱՆ (15.06.1940-Բեյրութ՝ Լիբանան-30.12.2016-Երևան՝ Հայաստան), 1946թ. հայրննաղարծվել է: Աղարտել է 1967-ին ԵՊԿ խմբավորության և ժողղրղական նվագարանների քաժիմները: Դասավանդում է՝ 1980-ից մինչև կյանրի վերըր ԵՊԿ-ում վարել է քառի դասարանը, սրոֆեսոր (2004թ.): Աշխատել է մենկատար՝ Հայաստանի երգչախմբային ընկերությունում, դեկավար (1969-1972 թթ.): 1993-ից՝ Ս. Էջմիածնի Մայր տաժարի երգչախմբի դեկավար, խմբավար: ՀՀ աղղղի և Հայրիխարմնիայի երկարամյա մենակատար, որի երկացանկում են հայ ժողղրղական, աշողղական, հոգղոը մեղղղներ, Կոմիտասի երկերից: Երաժշտագիտական և հայ երաժիշտների վերաբերող ուսումնական ձեռնարկների հեղինակ է: Նրա մասին ստեղծվել են տեսալողրեր Hovhannes Darbinyan, tar, Komitas "Unabi yev marali", instrumentation for tar Hovhannes Darbinyan: Khachatur Nersisyan "Khoher", Soloist - Honored Artisr of RA Hovhannes Darbinyan, (tar): Komitas "Het u araj", Hovhannes Darbinyan, (tar): Մասննագղտություն՝ Դարբինյան Հ. Ա., Աղղղող հիղղղություն, Երևան, 2005: Դարբինյան Հ. Ա., Հայ քառախարներ, 2004: Դարբինյան Հ. Ա., Թառի ձեռնարկ, 1980: Դարբինյան Հ. Ա., Հայկական ժողղրղական պարեղանականեր, 1998: Դարբինյան Հ. Ա., Թառի ուղղարան, 1998: Դարբինյան Հ. Ա., Հայ քաննախարներ, քաննախարներ, ողղարներ, 2005: Տես նաև «Ող ող է. հայեր» (կենսագղղական հանրագղտարան: Երկու հատրղղ), ՀՀ խմբ. հանննաժողղղ՝ Հ. Ա. Աղղղղյան (գղղ. խմբագղղ) և ողղղներ, Երևան, Հայկական հանրագղտարանի հրատ., Հ. 1, Աղղղյան-Վոշղղյան, 2005: Կղղղղյան Հ. Ա., Հովհաննես Դարբինյան, Խմբավարն ու քառախարը, Երևան, 2000:

Տեղեղյան ձեղղղղղ: ДАРБИНЯН ОВАНЕС АСАТУРОВИЧ (15.06.1940, Беирут, Ливан - 30.12.2016, Ереван, Армения), репатрирован в 1946 году. В 1967 году окончил Ереванскую государственную консерваторию им.Комитаса по специальности "Хоро-дирижирование" и "Народные инструменты". С 1980 по 2016 год преподавал класс тар в Ереванской государственной консерватории, профессор (2004). Работал солистом и директором Хорового общества Армении (1969-1972). С 1993 года руководитель хора Кафедрального собора Св. Эчмиадзина. Долеие годы являлся солистом Филармонического оркестра и оркестра Радио Армении. В его репертуар входили народные, ашугские, духовные песнопения и мелодии, произведения Комитаса. Он является автором учебно-методических пособий и статей об армянской музыке и армянских музыкантах. О музыканте сняты документальные фильмы: Hovhannes Darbinyan, tar, Komitas "Unabi yev marali", instrumentation for tar Hovhannes Darbinyan: Khachatur Nersisyan "Khoher", Soloist - Honored Artisr of RA Hovhannes Darbinyan, (tar): Komitas "Het u araj", Hovhannes Darbinyan, (tar): Библиография: Дарбинян О. А., Живая память, Ереван, 2005; Дарбинян О. А., Армянские таристы, 2004; Дарбинян О. А., Руководство по игре на таре, 1980; Дарбинян О. А., Армянские народные танцевальные мелодии, 1998; Дарбинян О. А., Школа игры на таре, 1998; Дарбинян О. А., Армянские каманчисты, канонисты, удисты, 2005. См. также: "Кто есть кто? Армяне" (биографическая энциклопедия: два тома), ред.комиссия: О. М. Айвазян (главный редактор) и др., Ереван, Армянская энциклопедия, 1, Абалян-Гушчян, 2005; Киракосян А., Ованес Дарбинян: дирижер и тарист, Ереван, 2000.

Information about the author: DARBINYAN HOVHANNES ASATUR (15.06.1940-Beirut, Lebanon-30.12.2016-Yerevan, Armenia), 1946 repatriated. He graduated from YSC's departments of Performing Arts ad Folk Instruments. From 1980 till the end of his life he taught in the class of tar in YSC. Since 2004 he has been a professor. He has worked as a soloist and director of Armenia's choir company (1969-1972). Since 1993, Head of St. Etchmiadzin Cathedral Choir. Many years he has been a soloist of RA Radio and Armenian Philharmonic choir whose repertoire includes folk, ashugh, spiritual melodies from Komitas' works. He is the author of the textbooks which refer to music and Armenian musicians. There are videos which present his music such as Hovhannes Darbinyan, tar, Komitas "Unabi yev marali", instrumentation for tar Hovhannes Darbinyan, Khachatur Nersisyan " Khoher...", Komitas "Het u araj", Hovhannes Darbinyan, Tar. Bibliography: Darbinyan H. A., Live memory, Yerevan, 2005. Darbinyan H. A., Armenian Rivers, 2004. Darbinyan H. A., Tar's Handbook, 1980. Darbinyan H. A., Armenian folk dances, 1998. Darbinyan H. A., Tar's class.

Ամիտղղում

Դիրիջեր, тарист, профессор ЕПК, Заслуженный артист РА, лауреат международных фестивалей-конкурсов **Ованес Асатуриович Дарбинян.** - "Воспоминания, статьи, размышления".

Представляем подборку авторских статей, воспоминаний видного деятеля армянской культуры, мыслителя, талантливого дирижера и тариста, педагога Ованеса Дарбиняна об армянских дирижерах - хормейстерах, певцах, великих писателях, исполнителем творчестве.

Summary

Conductor, tar player , professor of YSC, Honored artist of RA, winner of the international festivals competitions **Hovhannes Asatur Darbinyan.** - "Memoirs, articles, reflections".

We represent a selection of author's articles, memoirs of the eminent person of the Armenian culture, the thinker, talented conductor and the tar player, the pedagogue Hovhannes Darbinyan about the Armenian conductors - chorus masters, singers, great writers, performing art.

Երաժիշտական ԳԱՅԱՍՏԱՆ 1(54)2016